Օրինակ թղթոյ ազատութեամբ բանալոյ շուկայ մէջ քաղաքաց։

ԳԼՈՒԽ ՂԱ.

'Ի Սահակայ բագրատունէ ծայրագոյն իշխանէ մայրաքաղաքին յերևանու եղև խոստացեալ առ մկրտիչ որդոյ վրթանէսի նոյն քաղաքի վաճառականի զի ունի ազատութիւն բանալ շուկայն 'ի փողոցս քաղաքին վաճառելով զամենայն զոր ինչ կերակուր, զգեստ, ոսկի, երծաթ և ամենայն հրահայելիք և ակունք և ամենայն սերմ և բանճար խոտոյ մինչև փայտ պահելով զիւրն և զինչս իւր 'ի ներքոյ սահմանին հայոց՝ հատուցանելով հարկ և մաքս և այլն, և արդելեցաք նմայ գնելոյ և վաճառելոյ զեղօրեայք որ իցէ մահացուցիչ, բայց եթէ դարսան վասն բժշկութեան վաճառիցէ առն որում գոցի 'ի գնողէն երաշխաւոր և պահել պարտ է անթերի չափս և կշիռս հաւասար ըստ սահմանին հայոց, և 'ի գործ վաճառութեան եթէ գնելոյ և եթէ վաճառելոյ իրաց զգոյշ լինիցի, զի մի խաբեսցի արանց միամտից և ռամկաց, և մի գնեսցի իր ինչ չափազանց յեժան որում ձգտի 'ի միտ զի կարի գողացեալ, և մի վաճառեսցի չափազանց թանկ իբր խաբեցեալ, որ 'ի վերայ այդպիսի պատահմանց դատաստան ընդունելոյ հարկեսցի,